սրաի յերկրին իւրոյ, և կամ 'ի միջի ջրհորի, և կամ 'ի յոտս հիմանց տանց, և որ ոք տեղիս տեղիս միջի սահմանի գնեալ յերկրին իւրոյ, եթէ ոսկի, երծաթ զոր ինչ հրահայելիք և այլ, թէ ակունք պատուականք և այլն, բոլորովին ժառանգութիւն իւր է, այսինքն գնողին. և 'ի տանէն հայոց ստանողին որն որ իցէ ոչ տունն հայոց և ոչ վաճառողն ոչ յիշխեսցի ունել մասն և ոչինչ, բայց 'ի այսպիսի գտուածոյս միմիայն մի անգամ հատուցանել պարտ է տասանորդ իրին գտեցելոյ 'ի տունն հայոց մնացորդն կացցէ ժառանգութիւն նմայ։

ԳԼՈՒԽ ՆԹ.

Ամենայն ոք 'ի վարձու բնակող 'ի տան այլոց, և վարձու վարող յագարակս այլոց, և վարձու տնկող այգիս և զոր ինչ յերկիր այլոց, եթէ գտցի 'ի միջի յերկրի զոր ինչ և իցէ վարձ գտանողին լինիցի տասանորդ գտեալ իրին, և մի տասանորդ ևս ընծայեսցի 'ի տունն հայոց մնացորդն մնայ ժառանգութիւն Տեառն յերկրին։

ԳԼՈՒԽ ՆԺ.

Որովհետև տունն հայոց պահպանեսցէ աշխարհ զինուորօք և տացէ ազատութիւն ազգին հայոց, և պարսպօք փակեսցի ամուրս և հացօք կերակրելով, սերմօք Օգնական լինելով ազգին